որ անչափ մեծ ծառայութիւն է արել իւր ծննդավայրին և ջերմ սրտով սիրել նրա հողն ու ջուրը։

ՄԽԻԹԱՐԻՆ.

3 սեպտ. 1904 Շուլաւէր.

ԵՍԼՏՍԵՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ.

Բագուաբնակ մեծ. պ. Պօղոս Ց. Ղուկասեանը դիտաւորութիւն ունէր իւր հանգուցեալ դստեր յիշատակին հայ եկեղեցի կառուցանել Եալտայում և նորա յատակագծի պատրաստութիւնը յանձնուած էր յայտնի ճարտարապետ պ. Տէր Միքէլեանին, որ առանձնապէս ուսումնասիրել է Հայկական ճարտարապետութիւնը երկար ճանապարհորդութեամբ Գուգարաց աշխարհի և Անւոյ աւերակներում։ Մենք տեսանք արդէն պատրաստի յատակագիծը, որ մի շատ հոյակապ գործ է և Գոլկասի արդի հայ եկեղեցիներից գերազանցում է բուն հայ ճարտարապետութեամբ։ Այժմ, ինչպէս մենք իմացանք հաւաստի աղբիւրներից, արդէն ձեռնարկել են այդ փառաւոր եկեղեցու շինութեան։

Գ. ՇԻՐՎԱՆԶԱԴԷԻ ՄԻ ՆՈՐ ԳԻՐՔ.

Մեր աշխատակից Շիրվանզադէն գրել է մի նոր դրամ «Պատուի համար» վերնագրով, որ պիտի ներկայացուի առաջիկայ ձմեռը Թիֆլիսի և Բագուի հայ բեմերի վրայ։ Նիւթը առնուած է մեր նորագոյն բուրժուազիայի կեանքից։ Գործողութիւնը կատարւում է Բագուում։ Բովանդակութիւնը առաջ չենք բերում, քանի որ պիեսը պիտի տպագրուի «Լումայի» էջերում։

Վերջերս պ. Շիրվանզադէն մի քանի հանգամանքների պատճառով գրեթէ հեռացել էր գրական աշխարհից։ Բայց ներկայումս նա օկսել է գրել նախկին եռանդով և պիտի շարունակի աշխատակցել «Լումայիին» կանոնաւոր։